

Ուղեցույց, Ա, արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ,
Մարտի, 1953, 106 էջ:

Խորհուրդի և ողջունելի աշխատանք է կատարել Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդը՝ ընթերցողներին ներկայացնելով իր երեք տարվա աշխատանքի արդյունքը՝ առաջին «Ուղեցույցը»:

«Ուղեցույց» սկսվում է Ռ. Տեր-Մերկերյանի առաջարկով (էջ 1—11), որից ընթերցողը լիովին պատկերացում է կազմում 70 և ավելի տարիների ընթացքում մայր հողից կտրված, հայրենիքից զուրկ, օտար ափերում իր ինքնությամբ գոյատևող լեզվի մասին, լեզու, որը շարունակում է իր գոյությունը պահպանել գրողների ու բանաստեղծների, մամուլի և ուսումնական հաստատություններում աշխատող մտավորականների տքնաշան աշխատանքի շնորհիվ: Առաջարանի հեղինակը հակիրճ ներկայացնում է մի շարք հանգամանքներ, որոնք այսօր նպաստում են արևմտահայերենը օտար ազդեցություններից, անհարկի փոխառություններից հնարավորին չափ հեռու պահելու համար: Նա հատկապես կարևոր է համարում նոր հասկացությունների անվանման հարցը. «եսոսքը օտարամուտ ծալրահղությունների, չափազանցված անհարկի ձևերի և արտահայտությունների մուտքը հակակշռելն է, նոր հղանք-նորահար բառ հարաբերության ուղղորդմամբ հսկելը, ինչպես նաև օտարամուլությունների դեմ հակազդելը» (էջ 4): Սակայն, ինչպես յուրաքանչյուր լեզու, արևմտահայերենն էլ ունի իր բնականոն զարգացման ներքին օրենքները, որոնք անհնար է պատկերացնել՝ առանց արտալեզվական գործոնների դերի: Բնական է, որ նրա մշակման ու կանոնարկման, ինքնության պահպանման աշխատանքները պետք է սկսել լեզվի ամենահարափոփոխ համակարգից՝ բառապաշարից, հատկապես նորաբանության շերտից: Այս առումով առաջաբանի հեղինակը առաջնահերթ է համարում անհարկի փոխառությունները հայերեն կազմություններով փոխարինելը, ուստի Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի ամենահիմնական խնդիրը տեսնում է լեզուն միասնականացնելու, համակարգելու, ինչպես նաև նոր հասկացություններին հայերեն հարմար եղբեր (տերմիններ) կերտելու մեջ: Ուղեցույցն ընդգրկում է երեք բաժին՝ 1) Ֆրանսերեն-հայերեն, 2) անգլերեն-հայերեն, 3) դերմաներեն-հայերեն: Ցուրաքանչյուր բաժին ներկայացնում է հետևյալ ոլորտի տերմինները՝ կառք-իմքեղաշարժ, կառագնացություն, տեղեկագիտություն և քննադատական ճանաչողություններ:

Կառք-իմքեղաշարժ, կառագնացություն բաժինը (250 տերմին և անվանակարգային միավոր) կազմել և առաջաբանը գրել է Լևոն Թորոսյանը (Վիեննա, Ավստրիա), աշխատակցել են՝ Գրիգոր Ալաշալյանը (Լոս Անջելես, ԱՄՆ), Թորոս Թոբանյանը (Հալեպ, Սիրիա), Արի Թոփուզյանյանը (Լիոն, Ֆրանսիա), Նուրհան Ուզունյանը (Մոնրեալ, Կանադա), Գարրիել Բասմաճյանը (Մոնրեալ, Կանադա), Ռոբեր Տեր-Մերկերյանը (Մարսիլ, Ֆրանսիա), Արմեն Տոնոյանը (Լոս Անջելես, ԱՄՆ):

Տեղեկագիտություն բաժնի առաջաբանը գրել և անվանացանկը (մոտ 80) կազմել է Արի Թոփուզյանյանը, աշխատակցել են՝ Գրիգոր Ալաշալյանը, Լևոն Թորոսյանը, Նուրհան Ուզունյանը, Գարրիել Բասմաճյանը, Գեղամ Սահակյանը (Փարիզ, Ֆրանսիա), Ռոբեր Տեր-Մերկերյանը, Արմեն Տոնոյանը:

Քննադատական ճանաչողություն բաժնի ցանկը (մոտ 150 տերմին և անվանակարգային միավոր) կազմել են Լևոն Թորոսյանը, Արի Թոփուզյանյանը և Ռոբեր Տեր-Մերկերյանը:

«Ուղեցույց» վերջում ներկայացված է Արևմտահայ աշխարհաբարի կանոնագիրը, որը բաղկացած է յոթ կետից: Վերջին կետից տեղեկանում ենք, որ Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի որոշումները պարտադիր չեն կարող լինել, բայց ցանկալի է, որ դրանք որդեգրվեն և՛ կիրառվեն սփյուռքահայության կողմից:

Գրական արևմտահայերենը, որը զրկված է կենդանի լեզվի բնական զարգացմանը նպաստող մի շարք ազդակներից, իրոք, կարիք ունի խնամքի և հոգատարության, ե. սույն ուղեցույցի հրատարակումը պետք է դիտել այս ուղղությամբ կատարվող առաջին ողջունելի քայլը: Դրա հետ մեկտեղ այնտեղ տեղ են գտել մի շարք թերություններ, որոնք ցանկալի է, որ չվերկրվեն հետագա հրատարակություններում:

1. Հեղինակները պետք է խուսափեն տերմինային հոմանշությունից: Պետք է հետևողականորեն կիրառեն մեկ հասկացություն՝ մեկ տերմին սկզբունք: Եթե զեղարվեստական դրականության և առօրյա խոսակցական ոճում հոմանշությունը ճոխության և հարստության չափանիշ է, ապա դիտության տերմինահամակարգում այն թերություն է: Հեղինակները պետք է խուսափեն այնպիսի դուզածություններից, ինչպիսիք են՝ գլխահենակ-գլխահեն, կառք-ինժեղարժ, էլեկտրական-էլեկտրացլան, երդկածալ-քացովի կառք, քեռնակարգ-քեռնաաար, ճեռաչափ-կիլոմետրի ցուցիչ, երկգարկ շարժակ-երկտակ շարժիչ, կանչառումը պարապիտ-պարապիտ կանգառում, ստորերկրյա անց-դեղնանցք, հայտադրալեզու-ծրագրալեզու, հայտադրալեզու-ծրագրալեզու, անգլիկադիտություն-տեղակաբանություն, սենդվիչարգ-սենդվիչանոց-առողջականոց, լուսօրհեակել-լուսալուսանոցանոցանել և այլն: Ցավոք, նման դուզածությունները շատ են:

2. Բերի է ընդհանուր նորարանությունների քանակը: Թվում է, թե հեղինակները պետք է ներկայացնեն վերջին 2—3 տասնամյակներում մամուլի էջերում կիրառվող, բայց բառարաններում գտնվող չլեզվորված տարբեր ոլորտների նորարանությունները, մանավանդ հասարակական-քաղաքական տերմինները:

3. Հեղինակները դրեթև չեն օգտվել արեւելահայերենի նորարանություններից. հաշվը կադմությունները կարելի էր ներառել ընդհանուր բառացանկում, ինչը, անտարակույս, կնւաստեր դրական երկու տարբերակների նորարանության շերտի, հետևապես նաև բառային համակարգերի մերձեցմանը:

Չնայած նշած թերություններին՝ «Ուղեցույցի» լույս ընծայումը խրախուսելի երևույթ է: Հուսանք, որ հեղինակներն այսուհետև կհամադրեցնեն ՀՀ կառավարության առընթեր տերմինարանական պետական հանձնաժողովի (մինչև 1992 թ. տերմինարանական կոմիտե) անդամների հետ՝ հանուն դրական երկու տարբերակների բառապաշարի մերձեցման, երկվությունների կարգավորման և միօրինակացման:

Ռ. Ն. ՇԱՆՈՒՆՑ

Բանասիրական գիտությունների թեկնածու